ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲԻ ՏԻԳՐԱՆՅԱՆՑ

Ծնվել է 1841 թվականին: Ավարտել է Դորպատի (Տարտու) համալսարանը՝ ստանալով բժշկի որակավորում: Որպես բժիշկ աշխատանքային գործունեությունն սկսել է Սանկտ Պետերբուրգում (1876թ.), նույն պաշտոնով աշխատանքի է անցել Երևանում (1879թ.): 1882թ. գործուղվել է Պարսկաստան՝ համաճարակների դեմ պայքարելու նպատակով: 1885թ. ընտանեկան հանգամանքների պատճառով թողել է պետական ծառայությունը: Ունեցել է տիտղոսավոր խորհրդականի աստիճան:

Երևանի քաղաքագլուխ է ընտրվել 1894թ. հունվարին, սակայն անձնական նախաձեռնությամբ 1895թ. հունիսին թողել է պաշտոնը:

Պարգևատրվել է Սուրբ Ստանիսլավի 3-րդ աստիճանի շքանշանով: